

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13/1

18 մարտի 2014 թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով քաղաքացի Սպարտակ Գրիգորյանի լ/ա Ա.Շահբազյանի 18.02.2014 թ-ի դիմումով ներկայացված գանգատը, ինչպես նաև վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Քաղաքացի Սպարտակ Գրիգորյանի լ/ա Ա.Շահբազյանի կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ Հանձնաժողովին, 18.02.2014 թ-ին ներկայացվել է դիմում, որով խնդրել է վերանայել ՀՀ տարածք ներմուծված քարշակի համար մաքսային մարմինների կողմից հաշվարկված մաքսագերծման գումարը: Այնուհետև, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված 18.03.2014 թ-ի դիմումով Սպարտակ Գրիգորյանի լ/ա Ա.Շահբազյանը խնդրել է 18.02.2014 թ-ին Հանձնաժողովին հասցեագրված դիմումը թողնել առանց քննության:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից»:


Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Սպարտակ Գրիգորյանի լ/ա Ա.Շահբազյանի 18.02.2014 թ-ի դիմումի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Քաղաքացի Սպարտակ Գրիգորյանի լ/ա Ա.Շահբազյանի 18.02.2014 թ-ի դիմումի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ